ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 685-Ա

19 նոյեմբերի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԴՐԱԽՏԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԶԻԿ ԲԱԲԱՔՅՈԽՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կարեն Զազյանի 2025 թվականի նոյեմբերի 13-ի Ն/4425-2025 զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի Մ-18625-2025 գրությունը, ինչպես նաև Նազիկ Բաբաքյոխյանի գրավոր բացատրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դրախտիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Բաբաքյոխյանի նկատմամբ, աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից կազմված N 58/Դ ստուգման ակտով արձանագրված խախտումները թույլ տալու հանգամանքով պայմանավորված, կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

19.11.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ